ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևիկ համայնք, ՀՀ,
Շիրակի մարզ, գ. Արևիկ, Հեռ. (0312) 60093, (093) 88-88-04 ,
arevik.shirak@mta.gov.am

N 116

6 դեկտեմբեր 2016թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

Ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևիկի գյուղական համայնքի ավագանու թիվ 20, 21-Ն, 22-Ն որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

Հարգանքով՝
Համայնքի ղեկավարի
Պաշտոնակատար՝ Գ.Վանոյան

Կատ՝ Ս.Մելքոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20

28 նոյեմբերի 2016 թվական գյուղ Արևիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ՄԵԿ ԲՆԱԿՉԻ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հարապետության Շիրակի մարզի Արևիկի համայնքի բնակիչ Մանյա Ֆերդինանտի Ավետիսյանին տրամադրել միանվագ դրամական օգնություն `200000/ երկու հարյուր հազար /դրամ ամուսնու թաղման ծախսերը հոգալու նպատակով:

Ավագանու անդամներ՝	Կողմ՝ (6)	Դեմ՝ (0)	Ձեռնպահ՝ (0)
Գաբրիելյան Կարինե	.....		
Հովհաննիսյան Արմեն	.....		
Մկրտչյան Սաղաթել	.....		
Մքոյան Արամայիս	.....		
Նռանյան Հովհաննես	.....		
Ստեփանյան Վարդան	.....		

Արևիկի համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Գ.ՎԱՆՈՅԱՆ

28. նոյեմբերի 2016 թվական
գյուղ Արևիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՐԵՎԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 21-Ն

28 նոյեմբերի 2016 թվական գյուղ Արևիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 32-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասի դրույթներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հարապետության Շիրակի մարզի Արևիկի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի << Հայաստանի Հարապետության Շիրակի մարզի Արևիկի համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 32-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Համայնքի 2016 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածի <<4546,7>>դրամ թիվը փոխարինել <<1296,7>>հազար դրամ թվով.

2.4729 հոդվածի <<0>> դրամ թիվը փոխարինել <<850,0>> դրամ թվով, որից՝ 600,0 հազար դրամ՝ որպես օգնություն համայնքի բնակչության խմելու ջրի վճարի դիմաց:

250,0 հազար դրամ՝որպես միանվագ օգնություն համայնքի բնակիչ Դավիթ Արսենի Մելքոնյանի բուժումը արտերկրում կազմակերպելու համար:

3.4251 հոդվածի<<0>> դրամ թիվը փոխարինել <<2400,0>> դրամ թվով , համայնքի ճանապարհների վերանորոգման նպատակով:

Ավագանու անդամներ՝	Կողմ՝(6)	Դեմ՝(0)	Չեռնպահ՝(0)
Գաբրիելյան Կարինե	.....		
Հովհաննիսյան Արմեն	.....		
Մկրտչյան Սաղաթել	.....		
Մքոյան Արամայիս	.....		
Նոանյան Հովհաննես	.....		
Ստեփանյան Վարդան	.....		

Արնիկի համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Գ.ՎԱՆՈՅԱՆ

28. նոյեմբերի 2016 թվական
գյուղ Արնիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՐԵՎԻԿԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ 22-Ն

28 նոյեմբերի 2016 թվական Գյուղ Արևիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 27-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի ,1-ին կետի<<բ>>ենթակետի դրույթներով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևիկ համայնքի վարչական տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանել՝համաձայն հավելվածի:

2.ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևիկ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևիկի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 21-Ն որոշումը ուժը կորցրած ժանաչելու մասին» թիվ 27-Ն որոշումը:

Ավագանու անդամներ՝

Կողմ՝(6) Դեմ՝(0) Ձեռնպահ՝(0)

Գաբրիելյան Կարինե

Հովհաննիսյան Արմեն

Մկրտչյան Սաղաթել

Մքոյան Արամայիս

Նռանյան Հովհաննես

Ստեփանյան Վարդան

Արևիկի համայնքի ղեկավարի
պաշտոնակատար
28.Նոյեմբերի 2016թվական
գյուղ Արևիկ

Գ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Արևիկ համայնքի

ավագանու 2016 թվականի նոյեմբերի 28-ի

թիվ 22-Ն որոշման

Տեղական տուրքերի դրույքաչափեր

ՀՀ	Տեղական տուրքի տեսակը	Համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափը
1.	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝	
	ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	6000 դրամ
	բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝	
	բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	15000 դրամ
	բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	25000 դրամ
	բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	25000 դրամ
	բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	50000 դրամ

	ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝	
	գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	1500 դրամ
	դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	2000 դրամ
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
	ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝	1500 դրամ
	բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.	
	գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:	
3.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.	1000 դրամ
4.	Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝	
	1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	2500 դրամ
բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	2500 դրամ
գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	5000 դրամ
դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10000 դրամ
ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	15000 դրամ
զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	20000 դրամ
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	4000 դրամ
բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	4000 դրամ
գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	8000 դրամ
դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	14000 դրամ
ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	20000 դրամ

	զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	30000 դրամ
5.	Համայնքի տարածքում՝	
	ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար	350 դրամ
	բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	150000 դրամ
	գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	30000 դրամ
	գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝	
	հիմնական շինությունների ներսում՝	
	ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1000 դրամ
	բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1000 դրամ
	գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	3000 դրամ
	դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	8000 դրամ
	ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	16000 դրամ
	զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	24000 դրամ
	ոչ հիմնական շինությունների ներսում՝	
	ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1000 դրամ
	բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող	1000 դրամ

	հանրային սննդի օբյեկտի համար՝	
	գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	1500 դրամ
	դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	2000 դրամ
	ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	4000 դրամ
	զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝	10000 դրամ
	դ) Համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.	
	դա) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝	100 դրամ
	դբ) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝	2000 դրամ
	դգ) մեկ շաբաթվա համար՝	5000 դրամ
	դդ) մեկ ամսվա համար՝	20000 դրամ
	դե) մեկ տարվա համար՝	50000 դրամ
5՝	Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար	50000 դրամ
6.	Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝	
	ա) առևտրի օբյեկտների համար՝	35000 դրամ
	բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	50000 դրամ
	գ) բաղնիքների (սաունաների) համար՝	200000 դրամ
	դ) խաղատների կազմակերպման համար՝	500000 դրամ
	ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝	250000 դրամ
	զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝	150000 դրամ
7.	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին	

	գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝	
	ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	1500 դրամ
	բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	2500 դրամ
	գ) այլ արտաքին գովազդի համար՝	1000 դրամ
	դ) սոցիալական գովազդի համար՝	0 դրամ
	7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:	
	7.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:	
8.	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	2000 դրամ
	Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	50000 դրամ
9.	Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	5000 դրամ
9.1.	Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	40000 դրամ
10.	Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝	
	ա) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	2500000 << դրամ
	բ) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	5.000.000 <<

		դրամ
	գ) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝	7.000.000 << դրամ
	դ) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝	10.000.000 << դրամ

Տեղական վճարների դրույքաչափեր

<<	Տեղական վճարներներ տեսակները	Համայնքի ավագանու կողմից սահմանված տեղական վճարի դրույքաչափը
ա)	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	1000 դրամ
բ)	Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	1000 դրամ
գ)	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար.	1000 դրամ
դ)	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը սահմանվում է.	
	կենցաղային աղբի համար՝	
	դա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անշնագրային	100 դրամ

	հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար յուրաքանչյուր ամիս՝	
	դբ) ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝	10 դրամ
ե)	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար.	
	ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝	
	եա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝	500 դրամ
	եա) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝	1000 դրամ

Արևիկի համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Գ.Վանոյան